

Սույն ՄՏԹ-ի թարգմանությունը հիմնված է ADB.org-ում հրապարակված փաստաթղթի՝ 2017թ. ապրիլի 10-ով թվագրված անգլերեն տարբերակի վրա:



Հայաստան. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի երկրորդ ծրագիր

Ծրագրի անվանումը	Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի երկրորդ ծրագիր
Ծրագրի համարը	49384-002
Երկիրը	Հայաստան
Ծրագրի կարգավիճակը	Առաջարկված է
Ծրագրի տեսակը/ օժանդակության ձևը	Վարկ
Ֆինանսավորման աղբյուրը/չափը	Վարկ. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի երկրորդ ծրագիր Սովորական կապիտալ ռեսուրսներ 55.00 մլն ԱՄՆ դոլար
Ռազմավարական օրակարգեր	Բնապահպանական տեսանկյունից անվտանգ կայուն աճ Ներառական տնտեսական աճ
Փոփոխության շարժիչ գործոնները	Կառավարում և կարողությունների զարգացում Գիտելիքահեն լուծումներ Մասնավոր հատվածի զարգացում
Ոլորտ/ենթաօլորտ	Գյուղատնտեսություն, բնական ռեսուրսներ և գյուղական շրջանների զարգացում - Ջրային բնական ռեսուրսների կառավարում Ջուր և այլ քաղաքային ենթակառուցվածքներ և ծառայություններ – Քաղաքաշինական քաղաքականություն, ինստիտուցիոնալ և կարողությունների զարգացում -

Քաղաքային ջրահեռացում – Քաղաքային ջրամատակարարում

<p>Գենդերային հավասարություն և խթանում</p>	<p>Գենդերային խնդիրների արդյունավետ կառավարում</p>
<p>Նկարագրություն</p>	<p>Առաջարկվող ծրագիրը կկենտրոնանա Երևան քաղաքի և Արարատի, Արմավիրի և լեռնային՝ Արագածոտնի մարզի վրա: Այս մարզերում բնակչության համակցված թիվը կազմում է 1,8 մլն (երկրի բնակչության 50%-ը), և մարզերի ընդհանուր տարածքը ավելի քան 5,400 քառակուսի կիլոմետր է: Այս աշխարհագրական տարածքի՝ հատկապես, Երևանի և Արարատի վրա կենտրոնանալու հիմնական պատճառը դրանց տնտեսական նշանակությունն է, ստորերկրյա ջրերի չափազանց բարձր կլանումը, երաշտի, կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիությունը, ինչպես նաև գետավազանային կառավարման միջսեկտորային պլանների բացակայությունը:</p>
<p>Ծրագրի հիմնավորումը և կապը երկրի/տարածաշրջանի ռազմավարության հետ</p>	<p>1992թ.-ին Խորհրդային միության փլուզումից հետո Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում սպասարկումը կտրուկ անկում ապրեց: 2002թ.-ին ընդմիջվող ջրային ծառայությունները որոշ վայրերում մատուցվում էին օրական ընդամենը 2 ժամով, հավաքված կեղտաջրերի 55%-ը հեռացվում էր առանց որևէ մաքրման, չհաշվառված ջրի տոկոսը բարձր էր՝ 90% որոշ շրջաններում, և եկամուտների հավաքագրման տոկոսը կազմում էր շուրջ 15%: 2007թ.-ին, երբ ԱԶԲ-ն պատրաստել էր իր առաջին վարկը ոլորտի համար, Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքի ավելի քան 60%-ը 50 քաղաքում և 300 գյուղում շատ վատ վիճակում էր, և ջրային ու կոյուղու ցանցերի մոտ 50%-ը վերակառուցման և/կամ փոխարինման անհրաժեշտություն ուներ: Այս իրավիճակը ավելի էր սրվում վերանախագծված ենթակառուցվածքների, փոքր քաղաքներում նվազող տնտեսական բազայի, բնապահպանական ու կլիմայի փոփոխության հանդեպ առաջացող խոցելիության, և համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով:</p> <p>1998թ.-ին մայրաքաղաք Երևանում ներմուծվեց կառավարման պայմանագիրը: Դրան հաջորդեց ևս չորս կառավարման պայմանագիր, ինչը բարելավումների հանգեցրեց սպասարկման կատարողականի, այդ թվում՝ հավաքագրման</p>

արդյունավետության, ջրի որակի և ծառայության մատուցման արդյունավետության առումներով: Այս պայմանագրերը հնարավորություն ստեղծեցին անցում կատարել դեպի միասնական վարձակալության պայմանագիր ողջ երկրի համար, որն ակնկալվում է, որ ուժի մեջ կմտնի 2017թ.-ի առաջին եռամսյակում: Դրան զուգահեռ, ԱԶԲ-ն նաև աջակցել է անցմանը քաղաքականության վրա հիմնված վարկի միջոցով, որը հնարավորություն տվեց իրականացնել ոլորտի կառավարման խնդիրների ավելի ծավալուն բարեփոխումներ, այդ թվում՝ վերանայել Ջրային օրենսգիրքը, զարգացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Ջրային տնտեսության պետական կոմիտեի կարողությունները:

Եվ չնայած նրան, որ վերջին 2 տասնամյակների ընթացքում ոլորտում կատարվել են բազմաթիվ բարելավումներ, դեռ առկա է հինգ առանցքային խնդիր.

(i) Չհաշվառված ջրի բարձր ցուցանիշը: Ավելի վաղ նախագծերի իրականացման ժամանակ, երբ ջրի հասանելիությունը բարելավվել էր, հոսակորուստները և, հետևաբար, չհաշվառված ջրի ցուցանիշը աճել էր, քանի որ ավելի շատ ջուր էր մղվում համակարգի միջոցով և ճնշումն ավելի բարձր էր: 2013թ. ԱԶԲ-ն հանձնարարել էր ուսումնասիրություն անցկացնել՝ հասկանալու կորուստների պատճառները և որոշելու, թե ինչպիսի ուղղիչ միջոցառումներ է անհրաժեշտ անցկացնել: Ուսումնասիրությունը, ի թիվս այլոց, եզրակացրել էր, որ ջրակորուստը կարելի է կրճատել 50% -ով՝ փոխելով չափիչների հետ կապված կանոնակարգերը և համատիրությունների ներսում գտնվող ենթակառուցվածքային ակտիվների սեփականատիրությունը:

(ii) Ջրային օբյեկտների աղտոտումը: Նախորդ նախագծերը չեն անդրադարձել ջրահեռացման խնդրին՝ երկրում կոշտ թափոնների ենթակառուցվածքի բացակայության պատճառով: Նման ենթակառուցվածքը թույլ կտար մաքրել և հեռացնել նստվածքը, որն առաջանում է կեղտաջրերի մաքրման կայաններում:

(iii) Ստորերկրյա ջրային աղբյուրների կայունությունը: Արարատում և Արմավիրում ձկնաբուծարանների և գյուղատնտեսության համար ստորերկրյա ջրերի կլանումը ինտենսիվ է եղել: Առաջարկվող ծրագրում այս խնդրին մասամբ կանդրադառնանք՝ ներդնելով հեռազննման

սենսորային տեխնոլոգիաներ և կրկնակի (երկրորդային) ջրօգտագործում:

(iv) Էներգաարդյունավետություն: Առկա է էներգիայի սպառման կրճատման ներուժ, որոշ ենթածրագրերի շրջանակում հնարավոր է նույնիսկ հասնել զրոյական էներգետիկ հաշվեկշռի:

(v) Ծախսածածկում և ֆինանսավորում: Մասնավոր ոլորտի հետ տարբեր պայմանավորվածությունների պատճառով կառավարությունը չկարողացավ սակագնային բարեփոխումներ իրականացնել հանրապետության ողջ տարածքում: Համաշխարհային բանկը տրամադրել էր սակագնային պլանի քաղաքականության աջակցություն առաջարկվող վարձակալության պայմանագրի համար:

Առաջարկվող Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի երկրորդ ծրագիրը (WSSSP2) համահունչ է ԱԶԲ-ի՝ Ջրային ոլորտի գործառնական պլանին:

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտն առանցքային է երկրի՝ 2014-2018թթ. գործընկերության ռազմավարության համար: Առաջարկվող ծրագիրը նպատակ ունի աջակցել կառավարությանը հետևյալի միջոցով. (i) ավելացնելով կապիտալ ներդրումները ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում, այդ թվում՝ կեղտաջրերի մաքրման հատվածում, (ii) նվազեցնելով ջրի աղտոտումը, կրկնակի (երկրորդային) օգտագործելով մաքրված կեղտաջրերը, կառավարելով ստորերկրյա ջրային ռեսուրսները, և աջակցելով կարգավորող ոլորտի համապատասխան բարեփոխումներին. (iii) բարելավելով Ջրային տնտեսության պետական կոմիտեի և Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կարողությունները՝ օգտագործելու հեռազննման սենսորային տեխնոլոգիաները, աշխարհագրական տեղեկատվական համակարգը (GIS) և վերահսկման ու տվյալների ձեռքբերման (SCADA) համակարգը՝ մոնիտորինգի ենթարկելու հողը ստորերկրյա ջրերի շուրջ և ապահովելու տվյալներ գետավազանային կառավարման համար, (iv) փորձարկելով նոր մոտեցումներ Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում այն աշխարհագրական տարածքներում, որոնք խոցելի են երաշտի նկատմամբ, (v) նվազեցնելով ծառայությունների ծախսերը էներգաարդյունավետության բարելավման և կարգավորող

ոլորտում չհաշվառված ջրի վերաբերյալ բարեփոխումներ
 իրականացնելու միջոցով, և (vi) կարողություններ ստեղծելով:

Ազդեցությունը	Շրջակա միջավայրի պայմանների և բնակիչների առողջության բարելավում չորս հիմնական շրջաններում:
Արդյունքները	Բարձր որակի և ֆինանսապես կայուն ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատչելիության աճ
Վերջնարդյունքը	Առևտրային պայմանագրերի կառավարման բարելավում Ջրամատակարարման ենթակառուցվածքների կառուցում և վերակառուցում Ջրահեռացման ենթակառուցվածքների կառուցում և վերակառուցում Բնապահպանական ազդեցությունների և կլիմայի փոփոխության հանդեպ դիմադրողականության բարելավում

Աշխարհագրական տեղադիրք

Անվտանգության երաշխիքների կատեգորիաներ

Շրջակա միջավայր	B
Հարկադիր տարաբնակեցում	B
Տեղաբնակներ	C

Բնապահպանական և սոցիալական ասպեկտների ամփոփագիր

Բնապահպանական ասպեկտներ
Հարկադիր տարաբնակեցում
Տեղաբնակներ

Շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցությունը, մասնակցությունը և հանրային լսումները

Ծրագրի նախագծման ընթացքում
Ծրագրի իրականացման ընթացքում

Պատասխանատու պաշտոնյաներ

ԱԶԲ պատասխանատու պաշտոնյա	Սեզար Լորենս
ԱԶԲ պատասխանատու վարչություն	Կենտրոնական և արևմտյան Ասիայի վարչություն
ԱԶԲ պատասխանատու բաժին	Քաղաքաշինության և ջրային ոլորտի բաժին, ԿԱԱՎ
Իրագործող գերատեսչություն	ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն Հայաստանի Հանրապետություն, Երևան 375010, Հանրապետության հրապարակ, Կառավարության շենք 2

Ժամանակացույց

Հայեցակարգի հաստատում	2016թ. դեկտեմբերի 02-ը
Փաստերի հավաքագրում	2017թ. մայիսի 08-ից 19-ը
Տնօրինության կողմից վերանայում	2017թ. հուլիսի 11-ը
Հաստատում	-
Վերանայման վերջին առաքելություն	-
Ծրագրի տեղեկատվական թերթիկի վերջին թարմացումը`	2016թ. դեկտեմբերի 07-ը

Ծրագրի տեղեկատվական թերթիկը (ՄՏԹ) ամփոփ տեղեկատվություն է պարունակում նախագծի կամ ծրագրի վերաբերյալ: Քանի որ ՄՏԹ-ն աշխատանքային փաստաթուղթ է, հնարավոր է, որ որոշ տեղեկություններ չներառվեն այս նախնական տարբերակում, այլ հավելվեն ի հայտ գալուն զուգահեռ: Առաջարկվող ծրագրի մասին տեղեկությունները նախնական և մոտավոր են:

ԱԶԲ-ն սույն տեղեկատվական թերթիկում բերված տեղեկատվությունը ներկայացնում է բացառապես որպես ռեսուրս դրանից օգտվողների համար՝ առանց որևէ երաշխավորության: Թեև ԱԶԲ-ը փորձում է ապահովել բովանդակության բարձր որակը, այստեղ բերված տեղեկատվությունը որևէ կերպ չի երաշխավորվում՝ աներկբա կամ ենթադրաբար, այդ թվում՝ առանց սահմանափակումների կոմերցիոն կիրառության երաշխավորություն, պիտանիություն կոնկրետ նպատակի համար և չխախտելու պայման: ԱԶԲ-ն կամ դրա ներկայացուցչությունները չեն տալիս որևէ կոնկրետ երաշխիքներ այդպիսի տեղեկատվության ճշգրտության կամ լիարժեքության առնչությամբ: